Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց »ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ < *Ընտանիք-դպրոց- համայնք համագործակցության ուղիներ>*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *Մարտունի*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Հասմիկ Բեյբության*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *Ռադա Հարությունյան*

ԴՊՐՈՑ՝ *Վարդաձորի միջնակարգ դպրոց*

Մարտունի-2022

Նախաբան —---------- 3

Ընտանիք-դպրոց-համայնք կապը մանկավարժության հիմնաքար ---------- 5

Գլուխ Ի-Ընտանիք

1.Ի՞նչ է ընտանիքը ---------- 6

2.Ընտանիքի դերը անձի դաստիարակության գործում ---------- 7

Գլուխ II-Դպրոց

1.Ո՞րն է դպրոցի առաքելությունը ---------- 9

2.Ընտանիք-դպրոց կապը ---------- 10

Գլուխ III-Համայնք

1.Համայնքը և ձևավորվող անհատը ---------- 12

Համադպրոցական միջոցառումը ընտանիք-դպրոց-համայնք կապի

ամրապնդման միջոց ---------- 13

Եզրակացություն ---------- 15

Օգտագործված գրականություն ---------- 16

Նախաբան

Դաստիարակության նպատակի էությունը կատարյալ մարդու ձևավորումն է, նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Այս խնդիրը արդիական է եղել դեռևս միջնադարից, և բազմաթիվ պայծառ մտքեր են զբաղվել դրանով: Նրանցից յուրաքանչյուրը խնդրի լուծման իր տեսլականն է առաջարկել՝ իրենց ժամանակաշրջանին և կրթակարգին համապատասխան: Այսօր շատ բան է փոխվել. փոխվել է ուսուցիչը, երեխան, ծնողը, փոխվել են նաև դաստիարակությանն ու կրթությանը ներկայացվող պահանջները:Ճիշտ է,ընտանիքը հասարակության հետ կապող կարևորագույն օղակը դպրոցն է, իսկ երեխան այն հայելին է, որի միջոցով դպրոցն ու ընտանիքը ուսումնասիրում են միմյանց, սակայն կարծիքները միշտ չէ, որ համընկնում են: Սույն հետազոտական աշխատանքը նպատակաուղղված է դպրոց-ընտանիք-համայնք հարաբերություններում առկա խնդիրների վերհանմանը,դրանց լուծումների առաջադրմանը, ու այս շղթայի ամբողջականության պահպանման կարևորմանը՝ դպրոցում չափորոշչային պահանջներին համապատասխան արժեքային համակարգ, դիրքորոշում, հմտություններ ձևավորելու նպատակով: Աշխատանքը նպատակ ունի օգնել ուսուցիչներին ուսուցիչ-ընտանիք հարաբերություններում գտնել արդյունավետ մոտեցումներ, և առաջարկել գործիքակազմ՝ գնահատելու և պլանավորելու անձի հետաքրքրություններին, դպրոցի առանձնահատկություններին և համայնքի կարիքներին նպատակաուղղված գործողությունները:

Աշխատանքը նպատակ ունի նաև գործնականորեն ցույց տալ, որ համագործակցության ուղով շարժվելու պարագայում դպրոցական միջավայրը կդառնա ավելի խթանող, իսկ կրթությունն՝ ավելի արդյունավետ ու որակյալ: Փոփոխությունները դպրոցում միանգամից տեղի չեն ունենում: Ժամանակ է անհրաժեշտ դրանք արմատավորելու համար: Համայնքի ու ընտանիքի հետ սերտ համագործակցելով միայն՝ դպրոցը կկարողանա ընդլայնել իր դաստիարակչական ու կրթական ներգործության ոլորտը: Սովորողների հետ տարվող դաստիարակչական գործունեությունը համակողմանի ու ներդաշնակ զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում: Անհրաժեշտ է միայն դրանք գրագետ օգտագործել. հենվել աշակերտական կոլեկտիվի վրա, դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչների օգնության վրա՝ մասնակից դարձնելով աշակերտների ծնողներին ու համայնքը: Ժամանակի մարտահրավերներին դիմակայող անհատ, հասարակություն և ժողովուրդ ունենալու գրավականը կիրթ ու գրագետ անձի ձևավորումն է:Երեխաների ճիշտ դաստիարակությունից է կախված ժողովրդի դաստիարակությունը: 20-րդ դարի մեծագույն մանկավարժ, գրող Ա.Ս.Մակարենկոն

ժամանակին ասել է հետևյալ խոսքերը.<<Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակենք՝ մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:

Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ են գործընկերներ. աշխատե՛նք մեր աշակերտների ու նրանց ծնողների հետ և վստահե՛նք նրանց: Կրթական և դաստիարակչական հարթություններում յուրաքանչյուր փոքրիկ առաջխաղացումը կփոխհատուցվի, կգնահատվի, ինչը կխթանի մեր հետագա գործողությունները: Հուսով եմ, որ այս աշխատանքը կօգնի մեզ այդ բարդ,բայց միևնույն ժամանակ, հետաքրքիր բացահայտումներով լի ճանապարհին:

Ընտանիք-դպրոց-համայնք կապը՝ մանկավարժության հիմնաքար

Արագ փոփոխվող տեխնոլոգիաների այս ժամանակներում առանձնապես բարդացել է երեխաների դաստիարակության գործը, ընդլայնվել է նրանց հետաքրքրությունների ու հնարավորությունների շրջանակը,փոխվել են պատկերացումներն ու կարիքները:Թվում է, թե դպրոցի ու ընտանիքի գործը մեկն է՝ երեխայի կրթությանն ու դաստիարակությանն ուղղված աշխատանքի կազմակերպում ու իրականացում, սակայն պատկերն միանգամայն այլ է: Այսօր ծնողներն անընդհատ ու, կարծես, առանց հոգնելու խոսում են միայն իրենց երեխաների իրավունքներից՝ բոլորովին անտեսելով և՛ նրանց և՛ իրենց պարտականությունները: Մեր օրերում ծնողները հստակ չեն գիտակցում իրենց դերը երեխայի կրթության ու դաստիարակության հարցում, և նրանց միակ հոգսը, ասես, դարձել է լավագույն հեռախոսի ձեռքբերումն ու երեխային շքեղ հագնված դպրոց ուղակրելը:Այնինչ, գործընթացը պահանջում է շատ ավելի համակարգված ու լուրջ մոտեցում.ընտանիքներում և հասարակության մեջ պետք է շարունակվի և ամրապնդվի այն,ինչի հիմքը դրվում է դպրոցում:Այստեղ է,որ կարևորվում է ուսուցչի վարպետությունն ու կարողունակությունը՝ դպրոցի, ընտանիքի ու համայնքի ջանքերը համախմբելու, համակարգելու ուղղությամբ:Նրա կողմից կիրառված մեթոդներից ու միջոցներից է կախված՝կհաջողի արդյոք հասարակության լիիրավ անհատ ձևավորելու իր առաքելությունը:Գաղտնիք չէ, որ այսօր մենք դպրոցում լուրջ խնդիրներ ունենք՝ կապված ծնողների որոշ մասի դաստիարակության հարցերի հետ: Կա մի հին դպրոցական աֆորիզմ. <<Երեխաների հետ աշխատելիս ամենադժվարը մեծերի հետ աշխատելն է>>: Իսկ այսօրվա դեռահասների ճիշտ դաստիարակությունը շատ հարցերում պայմանավորված է նրանց իսկ ծնողների հետ տարվող աշխատանքների որակից: Ուստի, դպրոցի գերխնդիրն է՝ օգնել ծնողներին գտնելու երեխաների դաստիարակության այնչափ կարևոր ուղին: Վերջին տարիներին երեխաների դաստիարակության գործում դպրոցին և ընտանիքին առանձնապես մեծ օգնություն են ցույց տալիս տարատեսակ արտադպրոցական ու արտադասարանական խմբակները, ինչը շատ խրախուսելի է, բայց չպետք է մոռանալ նաև համայնքի դերը դպրոցի առաքելության իրագործման հարցում: Նրա օժանդակությունն ու հովանին մեծ ներդրում կարող են ունենալ երկրի ապագա քաղաքացու կայացման հարցում:Անհրաժեշտ է հիշել բումերանգի էֆֆեկտը. որչափ մեծ լինի ներդրումը կրթության ոլորտում,այնքան ավելի տեսանելի ու շոշափելի կլինի արդյունքը,քանզի,այն,ինչ դուրս եկավ ընտանիքից,դպրոցից ու համայնքից անպատճառ վերադառնալու է իր ելման կետ:Այդ նպատակով դպրոցը պետք է սերտ կապ հաստատի համայնքային կառույցների հետ, որոնք կաջակցեն երեխաների դաստիարակչական

շատ խնդիրների լուծման հարցերում:Դաստիարակությունը կլինի է՛լ ավելի արդյունավետ միայն ու միայն նրանց կողմից իրականացվող գրագետ համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միանգամայն միասնական նպատակներ, ձգտումներ, հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակության խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Գլուխ I-Ընտանիք

1.Ի՞նչ է ընտանիքը

Հոգեբանության մեջ ընտանիքը ձևակերպվում է այսպես.<<Ընտանիքը սոցիալական խումբ է>>:1Հարց է առաջանում՝իսկ ի՞նչ է սոցիալական խումբը: Երկու կամ ավելի մարդկանցից կազմված մարդկային յուրաքանչյուր հանրույթ,որն առաջանում է որևէ ընդհանուր նպատակի հասնելու համար, անվանում են սոցիալական (հասարակական) խումբ:2Բայց սոցիալական խմբերը կարող են տարբեր լինել՝աշխատանքային, ուսումնական, ռազմական և այլն:Սրանք երկրորդային խմբեր են:Ընտանիքն ընկած է այս սանդղակի հիմքում,այն առաջնային խումբ է:Առաջնային անվանում են այն խմբերը ,որոնց անդամները մշտապես անմիջական կապի մեջ են,տեսնում են իրար,մտքեր փոխանակում,հուզական վիճակներ ունենում:….Այստեղ մարդիկ իրար լավ են ճանաչում,գիտեն միմյանց առավելություններն ու թերությունները… :3

Յուրաքանչյուր ընտանիք,առանձին վերցրած,ունի իր գործառույթները:Դրանք կարող են հետապնդել բազմապիսի նպատակներ և լուծել միանգամայն տարբեր խնդիրներ՝սկսած մանկածնությունից մինչև երկրի պաշտպանության, կրթության, գիտության և հասարակական կյանքի այլևայլ ոլորտների զարգացմանն ուղված գործունեություն:Այս բաժնում փորձելու ենք առանձնացնել ու կարևորել այդ բազմաթիվ գործառույթներից մեկը՝երեխայի ներդաշտակ ու համակողմանի դաստիարակությունը ընտանիքում:

Ընտանեկան հարաբերությունները բարդ են,դինամիկ ու, շատ հաճախ, լիարժեք չեն գիտակցվում ընտանիքի անդամների կողմից:Քանի որ ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի իր դերն ու դիրքը ընտանիքում,ապա նրանք իրադարձություններն ու իրադրությունները դիտարկում ու գնահատում են միայն իրենց տեսանկյունից՝ելնելով իրենց տարիքից,կեսափորձից,սոցիալական դիրքից:Բայց պետք է հիշել,որ ընտանիքի բոլոր անդամները անհատներ են՝իրենց ցանկություններով,պահանջմունքներով, պատկերացումներով:Ինչպես ժան ժակ Ռուսոն է ասել՝ <<Երեխան ունի տեսնելու,

մտածելու,զգալու իր յուրահատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրա այդ ունակությունը մեր փորձով փոխարինելու փորձը>>: Ուստի, երեխաների դաստիարակության հարցում,ծնողները պետք է լինեն չափազանց զգոն ու նրբանկատ:Մեր իրականության մեջ քիչ չեն ընտանեկան վեճերի տեսարանները,որոնց կամա-ակամա ականատեսն են լինում երեխաները:Արդյո՞ք ծնողները գիտեն՝ինչպես են երեխաները ընկալում ու մեկնաբանում դրանք,ինչ ապրումներ են ունենում,ինչ են մտածում իրենց մասին:Ցավոք,շատերը կարևորություն չեն տալիս այս հարցին,և հետևանքները լինում են անդառնալի:

2.Ընտանիքի դերը անձի դաստիարակության գործում Ծնողներն ու ընտանիքի անդամները երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են: Նրանց անձնական օրինակը մեծ նշանակություն ունի երեխայի դաստիարակության գործում: Ընտանիքներում են դրվում երեխայի բարոյական, գեղագիտական, ինչու չէ, նաև հայրենասիրական դաստիարակության հիմքերը: Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար: Ծննդյան պահից սկսած՝երեխան տեսնում է իր ընտանիքը, նրա հարաբերություններն ու դրվածքը,ավանդույթները: Նա դառնում է դրանց կրողը: Ինչպես հոգեբանության մեջ է ընդունված ասել՝իրեն իդենտիֆիկացնում /նույնականացնում/4 է ընտանիքի անդամներին: Ծնողները շատ դեպքերում կարող են նույնիսկ չնկատել, որ իրենց ամեն խոսքով, վարք ու բարքով օրինակ են ծառայում իրենց երեխաներին: Ուստի՝ ծնողների գերագույն նպատակն ու խնդիրը պիտի լինի երեխաների դաստիարակությունը: Իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու միմյանց նկատմամբ վերաբերմունքն են: Հաճախ ընտանեկան դաստիարակության շատ անհաջողություններ բացատրվում են ծնողների անբավարար մանկավարժական գրագիտությամբ և անհրաժեշտ փորձի բացակայությամբ: Այս բացը պետք է լրացվի դպրոցի հետ սերտ համագործակցելով.փոխադարձ այցելություններով,խորհրդատվական-տեղեկատվական հանդիպումներով:

Շատ հաճախ երեխան դպրոցում տեղեկանում է դաստիարակության նորմերի, իսկ տանը կամ դրսում ականատեսն է դառնում լրիվ այլ երևույթների, որոնք հակասում են դպրոցում լսածին: Սա երկմտանք,տարակույս է առաջացնում երեխայի մոտ և, արդյունքում, նա ընտրում է այն խմբի կարծիքը կամ դիրքորոշումը, որն իր համար հեղինակային /ռեֆերենտային/5 է:Հաճախ ծնողներից կարող ենք լսել դժգոհություն,որ երեխան իրենց չի լսում,չի ենթարկվում,որ չկա մեկը, ով ի վիճակի է նրա վրա ազդել:Սա ահազանգ է,որ երեխան չունի <<հեղինակություններ>>տանը,որոնց կընդօրինակի կամ կենթարկվի:Նման դեպքերում ծնողները պատճառն իրենց մեջ պետք է փնտրեն, գտնեն՝ որտեղ և որ պահին են սայթակել, ու սկսեն հարաբերությունները վերակառուցել հենց այդ կետից, այլապես երեխան <<կընկնի շրջապատ>>: Իսկ թե դա ինչ հետևանքներ կարող է ունենալ,կանխատեսել հնարավոր չէ:Լավ է,երբ ռեֆերենտ խմբի հետաքրքրությունները,իդեալներն ու նպատակները կրում են հասարակական նշանակալից բնույթ:Բայց պատահում է և այլ կերպ:Երեխան կարող է ընկնել բոլորովին հակառակ կողմնորոշումների, գաղափարների ազդեցության տակ, ինչը ծանր հոգեկան ապրումների, մեղքի զգացողության, կոնֆլիկտների պատճառ կդառնա: Այս ամենը հաղթահարելու, կոտրելու համար իսկապես կարևոր է,որ ծնողները միշտ լինեն իրենց երեխաների կողքին՝իրենց գործերով,խոսքերով,խրատներով: Խրախուսելի են միասնական միջոցառումները՝նվիրված ընտանեկան սովորույթներին ու ավանդույթներին, շրջապատի և ընտանիքի անդամների նկատմամբ ուշադիր ու հոգատար լինելու մասին զրույցները,որոնք կձևավորեն կարեկցելու, սատարելու, մարդու մասին հոգ տանելու և այլ կարևոր հատկանիշներ: Այսպիսով, բոլորիս գերխնդիրն է՝ ձևավորել բարձր արժեքային հատկանիշներով օժտված, հասարակությանը պիտանի անձ, քանի որ, ինչպես Հ. Թումանյանն է ասել.<<...Աշխարհում ամենայն բարձր կոչումը մարդ կոչումն է >> :

Գլուխ II-Դպրոց

1.Ո՞րն է դպրոցի առաքելությունը Դպրոցի գլխավոր առաքելությունը հասարակությանը պիտանի, համակողմանի ու ներդաշնակ զարգացած, կարողունակ անձի ձևավորումն է:

Դպրոցն այն վայրն է,որտեղ բացահայտվում,ամրապնդվում ու կատարելագործվում են երեխաների ընդունակություններն ու կարողությունները:Այն պիտի լինի նպաստավոր ու զարգացմանը խթանող միջավայր,որտեղ սովորողները իրենց բազմակողմանի դրսևորելու հնարավորություն կունենան: Դպրոցը բոլոր երեխաներին տալիս է չափորոշչային պահանջներին համապատասխան կարողունակություններ՝ հաշվի առնելով նրանց տարիքային ու հոգեբանական առանձնահատկությունները:Այսօր ոչ մի երեխա,անկախ իր առողջական վիճակից,դուրս չի մնում ուսումնական գործընթացից:Բայց,գիտենք նաև,թե որքան կարևոր է սովորելու մոտիվացիան: Առաջին պայմանը սովորողների հետաքրքրությունները բավարարելն է,քանի որ նրանց կյանքի հետագա ուղղվածությունը դրանցից է կախված:Իսկ թե ուսումնական պրոցեսի նկատմամբ հետաքրքրության բարձրացումը որքան կարևոր է,ավելորդ է խոսել:Հայտնի է,թե սիրված ուսուցիչն ու առարկան աշխատանքի ինչպիսի հզոր խթան են:Սիրած առարկան ուսումնասիրելիս աշակերտը կարող է ինքնուրույն փնրել,գտել,կարդալ լրացուցիչ գրականություն,անել սեփական դիտարկումներ,եզրակացություններ,կամ,լրացուցիչ փորձեր անել՝իր ազատ ժամանակը դրանց տրամադրելով,կատարելագործվելով:Մնում է միայն ուղղորդել, խրախուսել նրան: Լավ դպրոցը կարելի է զատել ընդամենը երեք հատկանիշներով.

1. Բոլոր աշակերտները պիտի երջանիկ լինեն դպրոցում, սիրեն հաճախել դպրոց, լինեն ոգևորված և ժպիտները դեմքերին:

2. Ամեն աշակերտ ամեն դասից հետո պիտի նոր հմտություն ձեռք բերի կամ բարելավի ունեցած հմտությունը, կարողանա անել այն, ինչ մինչ այդ չէր կարող անել:

3. Դպրոցը պիտի ունենա զարգացման տեսլական, և գտնվի անընդհատ ինքնակատարելագործման գործընթացի մեջ6: Վաղուց անցել են ավտորիտար ուսուցման ժամանակները:Այսօր դպրոցը կանգնած է աշակերտի ու նրա ծնողի կողքին՝ պատրաստ համագործակցության:Ուսուցիչն աշակերտին դիտարկում է որպես գործընկեր:

2.Ընտանիք-դպրոց կապը

Դպրոցում կրթության բարձր որակի ապահովումը մեծապես կախված է նաև ծնող-դպրոց հարաբերությունների մակարդակից: Նրանց հաջող համագործակցության դեպքում ոչ մի հակասություն չի կարող առաջանալ երեխայի դաստիարակության մեթոդների ու միջոցների ընտրության ու կիրառման հարցերում: Շատ է քննարկվում ծնողներին ներգրավելու ձևի հարցը: Որոշ մարդկանց կարծիքով ծնողների դերը սահմանափակվում է երեխաների կարգապահությանը հետևելով և ուսուցիչներին աջակցելով:Ոմանք էլ գտնում են,որ ծնողը անմիջական մասնակցություն պիտի ունենա երեխայի դասապատրաստման գործընթացին,ծնողական ժողովներում հանդես գա առաջարկներով,համապատասխան մասնագիտական կարողությունների դեպքում՝ նաև զեկույցներով:

Ծնողներից շատերն ուզում են դառնալ իրենց երեխաների կրթության գործընթացի մասնակիցը,բայց չգիտեն կամ չեն պատկերացնում՝ինչպես:Այս հարցում նրանց օգնելու համար կարծում եմ արդյունավետ կլինեն ուսուցիչների հետ հանդիպումները, անհատական զրույցները,փոխադարձ այցելությունները,որոնք կնպաստեն երեխաների մոտ առկա խնդիրների բացահայտմանը,դրանց լուծման ուղիների ու միջոցների միասնական ընտրությանը:

Ծնողը պետք է հետաքրքրվի իր երեխայի առօրյայով,ճանաչի նրա աշխարհը:Բայց այդ հետաքրքրությունը չպետք է սահմանափակվի ստացած գնահատականի մասին ինֆորմացիայով կամ դասընկերների հետ ունեցած որևէ խնդրի քննարկմամբ:Ծնողը դպրոց պետք է գա ոչ թե նրա համար,որ <<կանչել>> են,այլ կամավորության սկզբունքով,հաճույքով:Օրինակ,նա կարող է իր օգնությունն առաջարկել դասարանական կամ դպրոցական միջոցառումների ժամանակ,մասնակցել դրանց սցենարների կազմմանը,ներկա գտնվել փորձերին,որպեսզի լիարժեք ընկալի այն մթնոլորտը,որում կրթվում ու դաստիարակվում է իր երեխան:Երեխան էլ,իր հերթին,տեսնելով ծնողի պատրաստակամությունը՝կաշխատի ավելի մեծ ոգևորությամբ,վստահ կլինի իր արարքներում: Երեխայի կրթության գործընթացում ծնողի ներգրավվածությունը կնպաստի աշակերտի ակադեմիական բարձր առաջադիմությանը, քննությունների ու թեստերի արդյունքների բարելավմանը: Միևնույն ժամանակ կաճի երեխայի հաճախելիության ցուցանիշը, վարքը կդառնա դրական ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Ծնողի այսպիսի <<վերահսկողությունը>> երեխայի մոտ կձևավորի որոշակի վարքային նորմեր,կամային որակներ,կբարձրացնի

պատասխանատվության զգացումը:Սրանք շատ կարևոր գործոններն են, որոնք կուղեկցեն նրան հետագա ողջ կյանքի ընթացքում: Բայց թվարկված բոլոր միջոցները կմնան վերացական ու կհամարվեն լոկ դատարկ ու սին խոսքեր,եթե չգտնեն իրենց կիրառությունը,չհիմնավորվեն փաստերով ու չամրագրվեն ստացված արդյունքներով:

Գլուխ III-Համայնք

1.Համայնքը և ձևավորվող անհատը

Մարդիկ ապրում և գործում են սոցիալական խմբերում՝ ընտանիքում,աշխատանքային խմբերում,ուսումնական և ընկերախմբերում:Բոլոր այս խմբերը այս կամ այն կերպ շփվում,հաղորդակցվում են միմյանց հետ և ամփոփվում են մեկ ընդհանուր հարկի տակ:Այդ հարկը նեղ իմաստով այն համայնքն է,որտեղ ապրում է մարդը,իսկ լայն իմաստով՝ երկիրը:Ու,քանի որ երեխայի կյանքի առաջին քայլերը սկսվում են համայնքից,կխոսենք դրա կարևորության մասին: Անհատը ծնվելուց հետո կյանքի որոշակի փուլերում հայտնվում է խմբերում և նրա հետագա ողջ աճն ու հոգեկան զարգացումը ընթանում է ներխմբային ու միջխմբային փոխհարաբերություններում:Դեռ մանկուց երեխան տեսնում,լսում և սպունգի նման կլանում է իր շրջապատում կատարվող իրադարձությունները,ընդօրինակում է մեծահասակների վարքը,ընդունում նրանց թելադրած նորմերը:Դեռ փոքր տարիքից միայն ընտանիքն ու դպրոցը չեն,որ պատասխանատու են երեխայի դաստիարակության և հոգեկան զարգացման հարցում:Համայնքի բոլոր անդամները այս կամ այն չափով պետք է մասնակից դառնան առողջ ու կարևոր սոցիալական նորմերի մշակման,իրականացման աշխատանքներին: Համատեղ արված աշխատանքը միավորում է խումբը, դրա անդամներին դարձնում կարեկից ու հոգատար միմյանց նկատմամբ:Բացի այդ՝ նման գործունեությունը լայն հնարավորություն է ընձեռում դիտարկելու,վերանայելու կոնկրետ խնդիրների վերաբերյալ սեփական դիրքորոշումները,արժեհամակարգը:Այսինքն՝ հնարավորություն է տալիս զարգանալ,ինքնակատարելագործվել:Փաստորեն,աշխատելով երեխաների համար,սովորում ու դաստիարակվում ենք ինքներս: Համայնքը մշտապես իր ուշադրության կենտրոնում պիտի պահի դպրոցը,տեղեկացված լինի նրա խնդիրներից,անհրաժեշտության և հնարավորության դեպքում օգնի նյութական կամ դրամական միջոցներով,քանի որ,ինչպես արդեն ասել ենք այս աշխատանքի ընթացքում,կրթության մեջ արված ներդրումները ապագայի ներդրումներ են:Դրանք վերադառնալու են բազմապատկված ու կատարելագործված:Մեր երեխաները գիտեն շնորհակալ լինել:

Համադպրոցական միջոցառումը՝ ընտանիք-դպրոց-համայնք կապի ամրապնդման միջոց

Աշխատանքի այս հատվածում ուզում եմ կիսվել իմ փորձով:Տարիներ շարունակ ինձ անհանգստացրել ու մտորելու տեղիք է տվել ընտանիք-դպրոց-համայնք կապը,ավելի ճիշտ՝ այդ կապի անորոշությունը,թերի ու անհաստատ լինելը:Իմ մանկավարժական գուծունեության ընթացքում բազմիցս ականատես եմ եղել դպրոցի խնդիրներին ու դժվարություններին,որոնց լուծումը պահանջել է այլ ուժերի ու կառույցների միջամտություն,ներդրում:Լինելով նաև դասղեկ՝անընդհատ շփման մեջ եմ եղել ծնողական կոլեկտիվի հետ,տեղյակ եմ եղել նրանց անհանգստություններից, դժգոհություններից, պահանջներից: Աշակերտներիս մասին էլ չեմ խոսում. ուրախություններ, վախեր, հաջողություններ, ձախողումներ….տեղյակ եմ բոլորից:Բայց քիչ է միայն տեղյակ լինելը կամ որոշ խնդիրների մասնակի լուծում տալը:Անհրաժեշտ է ավելի ընդհանրական ու կառուցողական մոտեցում այս երեք կարևոր օղակներն իրար կապելու ու այդ կապը ամրացնելու համար:Երկար մտորումներից հետո եկա այսպիսի մի որոշման՝անհրաժեշտ է ինչ-որ միջոցով հետաքրքրել ու մոտիվացնել այս խմբերին ու մղել համագործակցության: Դպրոցի տնօրինությանը տեղեկացրի,որ ուզում եմ կազմակերպել համադպրոցական մրցույթ-միջոցառում տեխնոլոգիայի շրջանակներում՝ :Խնդրեցի կապվել համայնքի ներկայացուցիչների հետ՝պարզելու կարող ենք արդյոք իրենց օգնությամբ կազմակերպել ցուցահանդես-վաճառք:Համաձայնություն ստանալուց հետո հարցը բարձրացրի առարկայական մասնախմբի նիստում,ուր որոշվեց հայտարարել մի նախագծի,որին հավատում ու վստահում էինք մենք,ու թերահավատորեն էին մոտենում մյուսները:Կազմվեց ժամանակացույց,դասարանները բաժանվեցին ըստ ներկայացվող երկրների,որոշվեց մրցույթի ձևաչափը,ընտրվեց ու հաստատվեց ժյուրիի կազմը,որում ընդգրկվեցին և՛ուսուցիչներ,և՛ 12-րդ դասարանի աշակերտներ,և՛ համայնքի ներկայացուցիչը:Առաջին հերթին անհրաժեշտ էր լուծել մրցանակային ֆոնդի հարցը,քանի որ նախատեսված էր գումարային մրցանակ՝պայմանով,որ այն կտրամադրվի համայնքի անապահով ընտանիքներից մեկի կարիքների մասնակի բավարարմանը:Դպրոցի բոլոր տեխնոլոգիա և ձեռնարկատիրություն առարկաների ուսուցիչների,խնդրեցի համագործակցել ու իրենց առարկաների ծրագրային նյութերի շրջանակներում բոլոր դասարաններում պատրաստել ձեռագործ աշխատանքներ կամ ուտեստներ,որոնք հանվեցին ցուցահանդես-վաճառքի:Հաջորդ կարևոր ու, երևի, ամենադժվար քայլը ծնողների հետ աշխատանքն էր,քանի որ ըստ մրցույթի ձևաչափի՝ ներկայացվելու էին կոնկրետ երկրի աշխարհագրությունը, պատմությունը, տնտեսությունը, մշակույթն ու

խոհանոցը:Ազգային հագուստի,ճաշատեսակների ընտրության ու պատրաստման հարցը մնում էր իրենց:Սկզբում,իհարկե,եղան դժգոհություններ:Պարզապես չէին պատկերացնում,որ իրենք էլ կարող են ու պետք է ընգրկվեն դպրոցական միջոցառման կազմակերպման աշխատանքներում:Հավաքեցինք աշակերտական ու ծնողական խորհուրդները, ներկայացրինք մեր տեսլականը,բացատրեցինք ինչու ենք նախաձեռնել այդ աշխատանքը և հստակեցրինք՝ինչի ենք ուզում դրանով հասնել:Հենց միայն այն միտքը,որ իրենց ծնողներն աշխատելու են իրենց հետ, արդեն մեծ ոգևորություն էր առաջացրել աշակերտների շրջանում:Դասարաններում էլ համախմբվել էին բոլորը՝դասղեկ,ուժեղ ու թույլ աշակերտներ:Ինֆորմացիայի հավաքագրում,նյութերի մշակում,տեսանյութերի պատրաստում, երգերի կամ պարերի ընտրություն,դահլիճի ձևավորում՝բոլորը կատարվում էր մեծ ոգևորությամբ ու գաղտնիությամբ.դասարանները չէին ուզում բացահայտել իրենց <<գաղտնիքները>>: Չորս ամիս քրտնաջան ու համառ աշխատանքից հետո 2018թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում /շաբաթական երկու դասարան/ միջոցառումը կայացավ:Դահլիճը միշտ լեփ-լեցուն էր:Գալիս էին ոչ միայն մասնակից դասարանների ծնողները ու դպրոցի աշակերտները,այլ նաև համայնքի անդամներ,ովքեր բոլորովին էլ կապ չունեին դպրոցի հետ: Այդ օրերին դպրոցը, ընտանիքը,համայնքը ամբողջացան, դարձան մի կրթական համայնք: Սա շատ կարևոր էր, գուցե՝ այդ օրերի ամենակարևոր ձեռքբերումը: Արդյունքում հաղթող ճանաչվեց մասնակից ամենակրտսեր `4-րդ դասարանը,որը ներկայացնում էր Նոր Զելանդիան:Մրցանակը, մեծ սիրով ու բարի արարքի գիտակցությամբ, տրամադրվեց ըստ նպատակի: Հավելեմ նաև,որ միջոցառման ավարտին պատրաստվեց քարտեզ-ցուցատախտակ,որի վրա տեղ գտան ներկայացված բոլոր երկրների մասին պատմող ձեռագիր գրքեր:Այն փակցված է դպրոցի միջանցքներից մեկում՝ հասանելի ու տեսանելի բոլորին:

Եզրակացություն

Ի փորձառություն վերցնելով սեփական դիտարկումներս ու կատարած աշխատանքներս՝ կարող եմ վստահաբար պնդել,որ աշակերտները դպրոցում պետք է ներգրավված լինեն ոչ միայն կրթական ու դաստիարակչական ծրագրերում,այլ ազատություն ունենան հանդես գալու իրենց նախաձեռնություններով, մտահղա-ցումներով,առաջարկներով:Նրանք պետք է դառնան դպրոցական ուսումնական նախա-գծերի ու ծրագրերի կազմողները, գնահատողներն ու իրականացնողները,իրենք որոշեն իրենց անհրաժեշտ կարողունակությունները և գիտակցեն դրանց զարգացման կարևորությունը:Այլ կերպ ասած՝դառնան մեր գործընկերները: Անհնար է պատկերացնել հզոր դպրոցական համայնք՝ առանց այդ համայնքի կայացման ու զարգացման գործում ծնողների ակտիվ մասնակցության ու ներդրման: Ծնողները ուսուցչի կողմից պետք է դիտարկվեն որպես առաջնային համագործակից, ում աջակցությամբ կարելի է մշակել հետաքրքիր ու արդյունավետ ձևաչափեր, որոնք կնպաստեն երեխաների դաստիարակությանը՝ նրանց ուսումնական յուրաքանչյուր օրը դարձնելով տոն: Դա ևս կնպաստի, ավելի կխորացնի ու կամրապնդի ընտանիք-դպրոց կապը: Բացի այդ, կարելի է ծնողների և երեխաների հետ համատեղ կազմակերպել ստեղծա- գործական, մասնագիտական հանդիպումներ,որտեղ նրանք միասին կներկայացնեն իրենց ընտանեկան լավագույն ավանդույթները, սովորությունները: Սա կօգնի,որ համայնքի բնակիչները ավելի լավ ճանաչեն միմյանց,երեխաների մեջ վերանա սոցիալական և էթնիկ խտրականությունը,ձևավորվի հանդուրժողականություն, փոխզիջում, փոխըմբռնում: Ծնողին ուսումնական և դաստիարակչական գործընթացներում ընդգրկելը չպետք է ընկալել նրան ձևափոխելու կամ դաստիարակելու դիտանկյունից:Մենք միայն կարող ենք օգնել նրան փոխել իր վերաբերմունքը դաստիարակության հանդեպ: Միայն այս պարագայում կարող ենք խոսել ընտանիք-դպրոց առողջ կապի,համագործակցության մասին: Համայնքն էլ, իր հերթին,ջանք ու միջոց չպետք է խնայի դպրոցին օգնելու,օժանդակելու հարցում,քանի որ կրթության ոլորտում արված ներդրումները ապագայի ներդրումներ են:Երեխան ընտանիքից դպրոց է գալիս նվազագույն գիտելիքներով,որոշակի դաստիարակությամբ,յուրահատուկ վարք ու բարքով:Բայց դպրոցից հասարակություն պետք է մտնի լիարժեք ձևավորված արժեհամակարգով,գիտելիքներով,հմտություններով ու հստակ դիրքորոշմամբ: Երկրի ապագա իրավագիտակից ու համակողմանի զարգացած քաղաքացու դաստիարակության հարցը եղել է բոլորիս ուշադրության կենտրոնում, բայց այն առավել քան արդիական ու հրատապ է այսօր, ու շատ կարևոր է , որ բոլորս նայենք միևնույն ուղղությամբ, հասնենք այն բանին, որ մեր երեխաները երկրին ու ազգին պիտանի ՄԱՐԴ դառնան:

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ

1. Ընտանիքի հոգեբանություն, դասագիրք 10-րդ դասարանի համար, Ա.Նալչաջյան, Ս.Մկրտչյան, Երևան 2001
2. Էթնիկական հոգեբանություն, Բուհական դասագիրք, Ա. Ա. Նալչաջյան, Երևան, <<Զանգակ-97>>,<<Հոգեբան>>,2001
3. Հոգեբանության հիմունքներ,Ա . Ա. Նալչաջյան, <<Հոգեբան>> Հրատարակչություն, Երևան,1997
4. Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Վ. Ա. Կրուտեցկի, <<Լույս>> Հրատարակչություն,Երևան 1976
5. Մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր, Մ. Ա. Մազմանյան, <<Լույս>> Հրատարակչություն,Երևան 1975
6. Ընդհանուր հոգեբանություն,Ա.Վ. Պետրովսկի, <<Լույս>> Հրատարակչություն,Երևան 1974
7. Психологическая концепция Анри Валлона,О.М.Тутунджян,Издательство <<Айастан>>,Ереван1966

   https://hy.wikipedia.org/wiki/Ընտանիքի__ungիալ_հոգեբանական_համակարգը#cite_note-4

8. https://mediamax.am/am/column/12872/